

ք. Երևան

26 05 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և ՀՀ թվով 9 համայնքներում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մտուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 26.10.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/14Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, իսկ Համաձայնագրի հավելվածը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011047215, 900011047231, 900011047280,  
900011047223, 900011047389, 900011047330,  
900011047298, 900011047272, 900011047249  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝




Վ. Հարությունյան  
(ստորագրություն)  
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝

«Նորաշեն» ՆՏ ԱԿ  
ք.Երևան, Հալաբյան փող. 11-36  
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ  
Հ/Հ 24144000617900  
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝



Գ. Բաղդասարյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.



